«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ք.Երևան 03.02.2014թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳԲԽ-02/14 բողոքը քննող հանձնաժողովի

ԳԲԽ-02/14 բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Գնումների բողոքարկման խորհրդի անունից, քննելով «Բի Էլ Գրուպ» ՍՊԸ-ի 2014 թվականի հունվարի 29-ի գրությամբ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված միջնորդությունը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Բի Էլ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 29.01.2014թ. գրությամբ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված «ՕԲԹ-ՊԸԾՁԲ-14/8» ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.01.2014թ. N 3 արձանագրությամբ կայացրած որոշումները կասեցնելուն ուղղված ժամանակավոր միջոց կիրառելու միջնորդությունը բավարարել:

2. Կասեցնել «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ՕԲԹ-ՊԸԾՁԲ 14/8» ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.01.2014թ. ժամը 15:00-ին կայացած նիստի N 3 արձանագրության 2.1 կետի ա. և բ. ենթակետերով՝ «Քլինլայն» ՍՊԸ-ին որպես ընտրված մասնակից ճանաչելու և վերջինիս հետ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու վերաբերյալ ընդունված որոշումները, մինչև ԳԲԽ 02/14 բողոքը քննող հանձնաժողովի կողմից «Բի Էլ Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքի վերաբերյալ վերջնական որոշումն ընդունելը:

Բողոքը քննող հանձնաժողովի՝

Նախագահ՝ Գոռ Ենոքյան

Անդամ՝ Սուսաննա Աղաջանյան